

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ՂԱՐԱՀԵՋԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Սայաթ-Նովայի դավթարի խաղերի մեջ առանձնահատուկ ուշադրության են արժանի ղարահեջաները: Եվ դա ոչ այն պատճառով, որ դրանք գեղարվեստական ավելի բարձր արժեք ունեն, քան մյուս ստեղծագործությունները սխալ կլինի այդպիսի ենթադրություն անելը: Պարզապես ղարահեջաները շատ չբացահայտված գաղտնիքներ ունեն և մեծ ջանքեր են պահանջվում դրանք հասկանալու համար: Նշենք նաև, որ նման խաղեր ստեղծելը ավելի դժվար է, քան այլ բնույթի բանաստեղծություններ կամ խաղեր հորինելը: Բավական է ծանոթանալ ղարահեջաների բարդ կառուցվածքին՝ դրանում համոզվելու համար: Բոլորովին էլ պատահական չէ, որ Սայաթ-Նովայի դավթարում հանդիպում են ընդամենը երեք ղարահեջա, դրանք էլ աղբյուրներ են: Այդ խաղերի առանձնահատկությունն այն է, որ նպատակային են՝ ստեղծված են մրցույթների համար: Դրանց ծածկագիր հենքը երբեմն այնպես է միաձուլված մյուս բանատողերին, որ չափազանց դժվար է տարբերել և առանձնացնել: Այդպիսին է, օրինակ, դավթարի 98-րդ էջի աղբյուրներն ղարահեջան, որը կառուցված է ավալի-ախրի (սկիզբ-վերջ) ձևով: Խաղի բոլոր տողերը սկսվում և վերջանում են մ տառով: Դրան ավելանում է նաև այն, որ յուրաքանչյուր տողում գործածվում են բառեր, որոնց իմաստը ճիշտ հասկանալ է պետք՝ պահանջվող տեղերում դրանք տրոհելու, ծածկագիր հենքը առանձնացնելու համար: Այսպիսին է նշված ղարահեջայի սկզբնատողը.

Մաղբուրդան քիմ չիխտի, քաֆու ալիֆմիմ
(Արևմուտքից ո՞վ դուրս եկավ, քաֆու ալիֆմիմ)

Միմ վերջավորությունը, տարբեր այբբենատառերի հետ միահյուսված կրկնվում է բոլոր բանատողերում (20 անգամ): Մի դեպքում դա կարող է պատկանելություն ցույց տալ, մյուս դեպքում լինել արաբական այբբենի քսանչորսերորդ տառը՝ միմ: Սկզբնատողի ալիֆմիմը, օրինակ, կարելի է կարդալ նաև ալիֆ և միմ: Ասենք, հնարքներ կան նաև տողամիջերում, որոնք շատ դժվարամարս են մեր օրերի մարդու համար: Այս խաղը Սայաթ-Նովայի մեզ հայտնի ղարահեջաններից միակն է, որի ծածկագիրը առայժմ չի հաջողվում հասկանալ: Դրան խանգարում է խաղի վրացատառ դրված լինելը (վրացական գիրը գլխատառ չունի) և այն բարբառի շիմացությունը, որով հորինված է խաղը: Այժմյան աղբյուրներենը շատ է տարբերվում երգչի գործածած բարբառից:

Մենք փորձել ենք հաղթահարել վրացական գրի և սայաթնովյան աղբյուրների հարուցած դժվարությունները՝ երգչի մյուս ղարահեջանների ծածկագրերը վերլուծելիս: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մեր ուսումնասիրության արդյունքները:

Նախ դավթարի 87-րդ էջի խաղի մասին՝ Այս զարահեջան վերջանում է «Յաշիմըզի քեու ալիֆ իֆի ֆաֆ» (տարիքս է քե ու ալիֆ երկու ֆաֆ) տողով։ Խաղը հայերեն չի թարգմանված, ուստի ամբողջապես չեմ մեջբերում, առանձնացնում եմ միայն ծածկագիր հենքը, որը հետևյալն է.

Ջիմու ալիֆ իֆի ֆաֆ (չիմ ու ալիֆ երկու ֆաֆ)
 Հեու ալիֆ իֆի ֆաֆ (հե ու ալիֆ երկու ֆաֆ)
 Սինու ալիֆ իֆի ֆաֆ (սին ու ալիֆ երկու ֆաֆ)
 Բևու ալիֆ իֆի ֆաֆ (բե ու ալիֆ երկու ֆաֆ)
 Իֆի ալիֆ իֆի ֆաֆ (երկու ալիֆ երկու ֆաֆ)
 Թեու ալիֆ իֆի ֆաֆ (թե ու ալիֆ երկու ֆաֆ)

Այս ծածկագրի տողերից երկուսը հեղինակը բացասում է, նրա մրցակիցը առաջինը դա պետք է հասկանա, որպեսզի դրանք չհաշվի և ստանա «Թեու ալիֆ իֆի ֆաֆ» (քե ու ալիֆ երկու ֆաֆ), այսինքն այն տարիքը (սլատաս-խանը), որ առաջադրվում է։ Ինչպիսիք է այդ անում Սայաթ-Նովան, Յույց տալու համար նույնությամբ մեջ բերենք ծածկագիր պարունակող այդ երկու տողը.

«Թանումիսան հեու ալիֆ իֆի ֆաֆ», այսինքն՝ չես ճանաչում հե ու ալիֆ երկու ֆաֆը։

«Խարամազ դուր սինու ալիֆ իֆի ֆաֆ», այսինքն՝ յարամազ է սին ու ալիֆ երկու ֆաֆը։

Բացասված այս տողերը ծածկագրից հանելով, կստանանք հետևյալ հենքը.

Ջիմու ալիֆ իֆի ֆաֆ (չիմ ու ալիֆ երկու ֆաֆ)
 Բեու ալիֆ իֆի ֆաֆ (բե ու ալիֆ երկու ֆաֆ)
 Իֆի ալիֆ իֆի ֆաֆ (երկու ալիֆ երկու ֆաֆ)
 Թեու ալիֆ իֆի ֆաֆ (թե ու ալիֆ երկու ֆաֆ)

Ծածկագրի տառերի դասավորությունը նույնությամբ պահպանելով, նշենք արաբական այբբենի մեջ դրանց հերթական տեղերը Կստանանք հետևյալ պատկերը.

Ջիմ—5 ալիֆ—1 2 ֆաֆ—22
 Բե—2 ալիֆ—1 2 ֆաֆ—22
 —2 ալիֆ—1 2 ֆաֆ—22
 Թե—3 ալիֆ—1 2 ֆաֆ—22

Այժմ թվերը առանձնացնելով, դրանք գումարենք.

$5+1+2+22=30$
 $2+1+2+22=27$
 $2+1+2+22=27$
 $3+1+2+22=28$ — (Թե ու ալիֆ երկու ֆաֆ)
 $12+4+8+88=112$

Թվերի հանրագումարը՝ 112-ը ծածկագրի տողերի՝ 4-ի վրա բաժանելով՝ կստանանք 28 (քե ու ալիֆ երկու ֆաֆ)։ Խաչաձև ստուգմամբ ստացված այս պատասխանը խաղը հորինելու թվականին Սայաթ-Նովայի ստույգ տարիքն է, որովհետև խաղավերջի տողում նա ասում է՝ տարիքս է քե ու ալիֆ երկու ֆաֆ։

Անդրադառնալով նաև աղբրեջաններն մյուս զարահեջային՝ Դա դավթարի 101-րդ էջի խաղն է, որը նախորդ զարահեջաններից տարբերվում է նրանով,

որ կառուցված է այբբենաշարի վրա և ներքևից գրված է հորինելու թվականը: Ուստի խաղի ծածկագրի վերծանումը մի նոր փաստ կտա Սայաթ-Նովայի ծննդյան թվականը մեկ անգամ ևս ստուգելու համար: Այդ ալիֆլամա-ղարա-հեջան աղբբեջաներենից հայերեն է թարգմանվել ոչ միայն այբբենաշարը, այլև ծածկագիրը զոհաբերելու գնով (այս և հաջորդ թարգմանությունները կատարել է Մ. Հասրաթյանը): Պահպանվել է միայն այբբենաշարի երկու տառով հետևյալ տողը՝ «Սայաթ-Նովան հեյիգ դեպի վով քայլեց» (բնագրում՝ «Հեյդան Սայաթ-Նովա վովա վարընդի»): Այբբենաշարի իրար հաջորդող այդ տառերը ծածկագիր համարելով, սայաթնովագետներից ոմանք զուր ջանացել են դրանց մեջ գաղտնիք գտնել: Մենք այդ հեղինակներից մեջբերումներ չենք անում, քանի որ նրանց զբաղեցնող տողը ծածկագիր չէ: Դրա փոխարեն դիմենք դավթարի աղբբեջաներեն բնագրին: Այսպիսին է ալիֆլամա-ղարա-հեջայի ծածկագրի հենքը.

Իֆի ալիֆ իֆի րե (երկու ալիֆ երկու րե)
Տալու ալիֆ իֆի րե (տալու ալիֆ երկու րե)
Սաթու ալիֆ իֆի րե (սաթ ու ալիֆ երկու րե)
Ձեու ալիֆ իֆի րե (զե ու ալիֆ երկու րե)
Ղաֆու ալիֆ իֆի րե (ղաֆ ու ալիֆ երկու րե)
Իեու ալիֆ իֆի րե (իե ու ալիֆ երկու րե)

Միանգամայն այլ ձևով է գաղտնագրված այս ծածկագիրը: Եթե նախորդ (դավթարի 87-րդ էջի) ղարահեջայի ծածկագիրը վերծանելու համար գործադրելի էր բացասման եղանակը, ապա այստեղ այն պիտանի չէ: Սայաթ-Նովան այս ալիֆլամա-ղարահեջան կառուցել է այլ կերպ և տվել է վերծանման այլ բանալի: Այդ բանալին գտնելու համար դարձյալ դիմենք դավթարին և ամբողջությամբ մեջ բերենք խաղի երկրորդ տողը, որի կիսատողով սկսվում է ծածկագիրը.

«Թեի դանա վար իֆի ալիֆ իֆի րե», այսինքն՝ թե հատ կան երկու ալիֆ երկու րե:

Ինչպես տեսնում ենք, ծածկագիր տողի տառերը թե հատ լինելու հանգամանքը ցույց է տալիս, որ այդ տողի տառերը թե-ով բազմապատկել է պետք: Այլ կերպ չի ստացվի հեղինակի առաջադրած խնդրի պատասխանը:

Թե՛ն (տա) ինչպես արաբական այբբենի, այնպես էլ տվյալ այբբենաշարի հերթականության 3-րդ տառն է: Ուստի ծածկագրի առաջին տողը պետք է բաղմապատկել 3-ով: Այդ նկատի ունենալով, շարունակենք ծածկագրի վերծանման գործողությունը: Տառերին արաբական այբբենի հերթականության մեջ (այդ հերթականությունը պահպանված է նաև այբբենաշարում) հատկացնենք իրենց տեղերը.

— 2 ալիֆ—1 2 րե—10
Տալու— 8 ալիֆ—1 2 րե—10
Սաթու—14 ալիֆ—1 2 րե—10
Ձեու—17 ալիֆ—1 2 րե—10
Ղաֆու—21 ալիֆ—1 2 րե—10
Իեու—28 ալիֆ—1 2 րե—10

Հերթականությունը պահպանելով, առանձնացնենք թվերը, առաջին տողից ստացվածը բաղմապատկենք 3-ով, կամ տողը կրկնենք երեք անգամ.

$$6+3+6+30=45$$

$$8+1+2+10=21$$

$$14+1+2+10=27$$

$$17+1+2+10=30$$

$$21+1+2+10=34$$

$$28+1+2+10=41$$

$$94+8+16+80=198$$

Ստացված գումարը (198) բաժանելով ծածկադրի տողերի (6) վրա, կստանանք 33 ($198:6=33$), այսինքն՝ Սայաթ-Նովայի տարիքը քննարկվող այբբենաշար-ղարահեջան հորինելու թվականին: Ինչպես վերևում ասացինք, խաղի ներքևից գրված է այն հորինելու տարին՝ 1755 թ.: Այժմ կատարենք մի հասարակ թվաբանական գործողություն՝ ակիֆլամա-ղարահեջան հորինելու թվականից հանենք հեղինակի տարիքը. $1755-33=1722$: Ուրեմն, մի ավելորդ անգամ հաստատվում է այն վարկածը, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722 թ.:

Սայաթ-Նովան, թե՛ վրաց թաղավորի պալատում եղած ժամանակ, թե՛ դրանից առաջ ապրուստի միջոցը աշուղություն է վաստակել: Ղարահեջաների ծածկագրերի վերլուծությունը վկայում է, որ նա հեշտ չէ իր հացը գատել: Իզուր չէ Պենտելենց Հովհաննիսյանը դավթարում թողած հիշատակարանում գրում. «...սույն տետրակի գրիչն ու այս խաղերի հորինողը շատ օրեր է մթնացրել և գիշերներ լուսացրել սրանք հորինելիս»:

Սայաթ-Նովայի ստեղծագործություններով հետաքրքրվողներին շատ է զբաղեցրել «շախաթայի» բառը: Տարբեր մեկնություններ են արվել այդ բառը բացատրելու համար: Բայց բուն նյութից կտրված դատողությունները չէին կարող բացահայտել «շախաթայի» բառի էությունը:

Սայաթ-Նովան այդ բառը իր ստեղծագործություններում գործածում է վեց անգամ, հինգը աղբբեջաններեն խաղերում՝ որպես դրանց կառուցվածքի պարտադիր տարր, մեկը՝ հայերեն առաջին խաղի «Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին խար չիս անի» սկզբնատողում՝ խաղ ասող, աշուղ իմաստով: Ուշադրություն դարձնենք դավթարի սկզբի աղբբեջաններեն հինգ խաղերին, որոնց մեջ գործածվում է այդ բառը: Առաջինում գրված է «շախայի», երկրորդում՝ «շահ խաթայի», երրորդում՝ «շախաթաի», չորրորդում՝ «շախաթաի», հինգերորդում՝ «շախաթաիա»: Դժվար չէ հասկանալ, որ ճիշտը «շախաթային» է:

Բոլոր այդ խաղերն էլ մրցասպարեզի համար են հորինված: Սակայն դրանց հայերեն թարգմանությունները լրիվ կերպարանափոխել են խաղաձևը, շատ տեղերում աղավաղել իմաստը: Այդ ցույց տալու համար ներկայացնենք դավթարի աղբբեջաններեն երրորդ խաղի բնագրի վեցերորդ տողը և դրա հայերեն թարգմանությունը. Օխումիշամ եէի ալիֆ բէի ալիբ բէի եաշ ուստադուն (Հասկացիլ իմ, ասա, յարաբ, արթար գործն ուստադի):

Չի կարելի չնկատել, որ այստեղ աղավաղվել է հենց այն տողը, որի մեջ ծածկադրված է հեղինակի մրցակցի տարիքը (Սայաթ-Նովայի այդ խաղը մրցակցի հարցադրման սլատասխանն է): Բառացիորեն ասված է. «Կարդացել եմ եէի, ալիֆ, բէի ալիբ, բէի՝ տարիքն է ուստադի»: Պարզ հասկացվում է, որ ուստադի (վարպետաց վարպետի) տարիքը եէի, ալիֆ, բէի տառերի այբբենական հերթականության գումարն է: Իսկ ինչ վերաբերում է բէի տառիս,

այն բացասված է ալիք (ալիքի-այլուրություն, ուրիշություն) բառով, ուստի չպետք է հաշվի առնել: Խաղը ամբողջապես հարգանք է արտահայտում մրցակցի նկատմամբ, որի վարպետությունը գնահատում է (հավանաբար դեռ երիտասարդ) Սայաթ-Նովան:

Շախաթայի (շահ խաթայի) բառի իմաստն ավելի հասկանալի է դավթարի երրորդ էջում սկսվող (հերթականությամբ երրորդ) խաղում: Այսպիսին է նրա սկիզբը. «Դեղիլար քի, շախաթայի, իւէի ալիֆ բէի ալիֆ բէի ուստադ նեջա բաշ շխարա եաի ալափ բէի ալիֆ բէի»: Այսինքն. «Ասում են, թե, շախաթայի, իւէի ալիֆ բէի ալիֆ բէի ուստադն ինչպես գլուխ կհանի աղեղն արած բէի ալիֆ բէի»: Պարզություն մտցնելու համար այբբենատառերը միավորենք և նախադասության մեջ դրանց փոխարեն դնենք ստացված բառերը: Խէի, ալիֆ, բէի, ալիֆ, բէի = խարաբ (փշացած): Բէի, ալիֆ, բէի = բաբ (հավասար): Սայաթ-Նովայի հնաբանների տակ այստեղ քողարկված է «Ասում են, թե, շախաթայի, խարաբ (փշացած) ուստադն ինչպես գլուխ կհանի աղեղն արած բաբ» նախադասությունը: «Աղեղն արած բաբ» դարձվածքի իմաստը մեր կարծիքով, այն է, որ ձգալարը թույլ է, աղեղը ուղիղ (հավասար) դիրք է ընդունել, չի կարող նետը հասցնել նշանակետին:

Շախաթայի (շահ խաթայի) բառը ոչ մի խաղում մեծատառով չի գրված, որովհետև հատուկ անուն չէ: Մի դեպքում շախաթային կարող էր մեկին հասցեագրվել, մյուսում մեկ ուրիշի՝ նայած, թե ով է մրցասպարեզ մտել: Նշենք նաև, որ բառը բոլոր խաղերում միջանկյալ է, կոչականի դեր է կատարում: Մեր կարծիքով տվյալ ժամանակաշրջանում մրցասպարեզում աշուղները իրենց ելույթները սկսելիս իրար դիմել են ավանդույթ դարձած շախաթայի (շահ խաթայի) բառով, որը նշանակում էր պատուհասի արքա, մեծագույն պատուհաս (փորձանք): Ասում ենք տվյալ ժամանակաշրջանում, որովհետև հայտնի է, որ նախորդ դարերում աշուղները մրցասպարեզներում իրար դիմել են նաև «ո՛վ վարպետ գոված» դարձվածքով: Այդպես է, օրինակ, ժողովրդական հեքիաթ «Աշուղ Ղարիբ» սիրավեպում: Ինչպես բոլոր հեքիաթներն են սկսվում «լինում է, չի լինում»-ով, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանում աշուղական մրցասպարեզի խաղերը սկսվել են «Ասում են, թե, շախաթայի...» դարձվածքով: Մեզ թվում է, ճիշտ չէ շախաթային խաղաձև համարելը, Խոս-Վել ևս այդ բառին աստծու կամ ինչ-որ բարձր ոգու գաղափար վերադրելը:

Խոսենք նաև մի անձնանվան մասին, ուր, մեր կարծիքով, ճիշտ չի հասկացված: Խոսքը վերաբերում է դավթարի 72-րդ էջի թեջնիս խաղի մեջ հիշատակված Իբրահիմ Խալիլ անվանը: Այդ խաղի ընագրի վերջին տողը՝ «Իբրահիմ Խալիլ թաբ զրրիս գուն խանաջալ» հայերեն թարգմանվել է՝ «Պտիս քաշի են խալիլի պես տանջանք»: Թույլատրելի է, իհարկե, թարգմանելիս ուշ շրջաններ եատարել (հարկադրաբար), մանավանդ, երբ գործ ունենք մի այնպիսի քարդ խաղաձևի հետ, ինչպիսին թեջնիսն է: Թարգմանիչը այդ բացթողումը լրացնելու համար ծանոթագրություններում նշում է, որ «Խաղի վերջին երկու տողերը վերաբերում են բիբլիական հայր Աբրահամին (Խալիլ), որին իբր հրեացել է աստված՝ հրեշտակի կերպարանքով»: Այդ կարծիքի անհիմն լինելը ցույց տալու համար բառացիորեն հայերեն մեջբերենք թեջնիսի վերջին տողը (ո՛չ երկտողը, միայն վերջին տողն է վերաբերում անձնանվանը): «Իբրահիմ Խալիլն է միայն քառասուն օր [եղել] խանական օրհասում»:

Աստվածաշնչից դիտենք, որ հայր Աբրահամի հետ կապված օրհասում գտնվելու հանդամանք չկա, այն էլ քառասուն օրվա տևողությամբ: Բացի այդ, խոսքը այստեղ սոսկ օրհասի մասին չէ, այլ խանական օրհասում գտնվելուն է վերաբերում: Թվում է, թե բառերի, անունների, դարձվածքների դիպուկ ընտրություն կատարող մի այնպիսի վարպետ, ինչպիսին Սայաթ-նովան է, իրան թույլ չէր տա խանի կոչումը վերագրել Աստվածաշնչի հայր Աբրահամին: Մեր կարծիքով, այստեղ խոսքը վերաբերում է մի այլ Իբրահիմ հալիլի, ուրի հետ. իրոք, կապված է քառասուն օր խանական օրհասում գտնվելու պատմություն: Դա Սայաթ-նովայի ժամանակակից Իբրահիմ խանն է, որին նույնպես հալիլ էին կոչում: Այսպես է ներկայացնում Լեոն այդ Իբրահիմի հետ կապված պատմությունը. «Փաթալի խանը ձերբակալում է Փանահ խանի որդուն և կտրելով Շուշին վերցնելու հույսը, ճանապարհվում է դեպի Ուրմի, իր հետ տանելով և Իբրահիմ-հալիլ աղային»:

«Ինքը Փանահ խանը, Փաթալի խանից վրեժ հանելու և մանավանդ իր պերի տարած որդուն աղատելու համար, գնում է Պարսկաստան և միանում Քերիմ խանի հետ, որը գնում, պաշարում է Ուրմին, հաղթում է, գերի վերցնում, ապա և սպանում Փաթալի խանին, ազատում է նույնպես Իբրահիմ-հալիլ աղային և ուղարկում նրան Ղարաբաղ, մինչդեռ Փանահ խանին արգելում է իր մոտ, չկամենալով, որ այդ ուժեղ մարդը ավելի ևս ուժեղանա, վերադառնալով իր մոտը բերդը: Իր հետ նա տանում է Փաթալի խանին Շիրազ: Այդտեղ էլ 1762 թվականին մեռնում է Փանահ խանը: Նա արդեն կատարել էր իր գործը. պարսկական պետության մեջ ստեղծել էր մի ընդարձակ և ուժեղ իշխանություն—Ղարաբաղի խանությունը»¹:

Վերը հիշատակված թեքնիսից բացի, Սայաթ-նովան նույն այդ հալիլին հիշատակում է նաև դավթարի 26-րդ էջի աղբբեջաներեն խաղում: Այնտեղ, առանց անունը տալու, ասվում է. «հալիլ զրխ գուն հաղկուն իոլունդա կալդի»². այսինքն՝ հալիլը քառասուն օր արդարության ճանապարհին մնաց [սպասեց]: Այս խաղը նույնպես թեքնիս է և մեր կարծիքով նշված տողում դործածված անանուն խալիլը Ղարաբաղի Իբրահիմ խանն է, այլ ոչ աստվածաշնչային հայր Աբրահամը:

Սայաթ-նովայի խաղերում դեռ շատ է չհասկացվածը: Դա առաջին հերթին վերաբերում է նրա աղբբեջաներեն խաղերին: Անկասկած է, որ դրանք հանգամանորեն ուսումնասիրելու դեպքում կարելի է նոր տվյալներ ու փաստեր հայտնաբերել, որոնք ավելի կամբողջացնեն բանաստեղծի կերպարը:

О «КАРАЕДЖА» САЯТ-НОВЫ НА АЗЕРБАЙДЖАНСКОМ ЯЗЫКЕ

В. С. БАГДАСАРЯН

(Резюме)

В статье анализируются две «караеджа» Саят-Новы на азербайджанском языке, которые дают новые данные о возрасте, а также дате рождения ашуга. Раскрывается также сущность слова «шахатан» и дается объяснение имени Ибрагима—Халила.

¹ Լեոն, Երկերի ժողովածու, հատ. III, Երևան, 1973, էջ 273—274: